

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
կրթության հոգեբանության
և սոցիոլոգիայի ֆակուլտետ

Ծրագիր

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԺԹ.00.03 առարկայի

կրթության հոգեբան. և սոցիոլոգ.

Հաստատված է ----- ֆակ. №_5 _ _ _նիստ

ԺԹ.00.03 - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սոցիալական հոգեբանության ուսումնասիրության առարկան և համակարգը:

**Սոցիալական հոգեբանության զարգացման համառոտ պատմական ակնարկ
*Սոցիալական հոգեբանության առարկան, նրա տեղը հոգեբանական գիտության
համակարգում***

Սոցիալ-հոգեբանական գիտելիքների սահմանային բնույթը: Սոցիալական հոգեբանությունը որպես սոցիալական խմբերում մարդկանց վարքի և գործունեության օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ: Սոցիալական հոգեբանության հիմնական հասկացությունները □ Սոցիալ-հոգեբանական երևույթների առաջացման և զարգացման մեխանիզմները: Սոցիալ-հոգեբանական ֆենոմենների հիերարխիան և հարաբերակցությունը: Հասարակական գիտակցություն և հասարակական հոգեբանություն: Սոցիալական հոգեբանության առարկայի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները:

Սոցիալական հոգեբանության կառուցվածքը և նշանակությունը, նրա ժամանակակից բնագավառները

Սոցիալական հոգեբանության հիմնական բաղադրամասերը և մասնավոր տեսությունները: Սոցիալական հոգեբանության ժամանակակից տեսական և կիրառական բնագավառները: Սոցիալական հոգեբանության կողմից լուծվող խնդիրները, նրա դերը անձի ձևավորման, միջանձնային և միջխմբային հարաբերությունների կարգավորման, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում աշխատանքի արդյունավետության և որակի բարձրացման գործում:

Սոցիալ-հոգեբանական մտքի պատմական ցարգացումը

Սոցիալական հոգեբանության, որպես հոգեբանական գիտության բնագավառի ձևավորման փուլերը: Սոցիալ-հոգեբանական տեսությունների ստեղծման առաջին փորձերը (Ա.Լազարուս, Գ.Շտենդալ, Վ.Վունդտ, Գ.Տաոդ, Ս.Սիգելե, Գ.Լեբոն): Սոցիալական հոգեբանության փորձարարական շրջանի զարգացումը արևմուտքում 20-րդ դարում: Սոցիալական հոգեբանության զարգացումը Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում: Սոցիալական հոգեբանության զարգացման հիմնական գիտական ուղղությունները:

Սոցիալական հոգեբանության տեղը գիտությունների համակարգում

Սոցիալական հոգեբանության կապը ընդհանուր, տարիքային և մանկավարժական, բժշկական, ինժեներական, իրավաբանական և քաղաքական հոգեբանության, ինչպես նաև սոցիոլոգիայի, մանկավարժության, փիլիսոփայության, ազգագրության և բարոյագիտության հետ:

Սոցիալական հոգեբանության մեթոդաբանությունն ու մեթոդները

Մեթոդաբանություն հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Սոցիալական հոգեբանության ընդհանուր, հատուկ և մասնավոր մեթոդաբանու-

թյունը: Մասնավոր մեթոդաբանության հիմնական և լրացուցիչ մեթոդները: Տեխնիկական սարքերի կիրառումը սոցիալ-հոգեբանական հետազոտություններում: Կոնկրետ սոցիալ-հոգեբանական երևույթների ուսումնասիրության մեթոդիկաները: Սոցիոմետրիան և ռեֆերենտոմետրիան որպես սոցիալական հոգեբանության մեթոդներ: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունների երկու հիմնական տիպերը՝ փորձարարական և համահարաբերակցական (կոռելյացիոն) □ Սոցիալ-հոգեբանական գիտափորձի առանձնահատկությունները, գիտափորձի հիմնական տիպերը: Փորձարարական նյութի մշակման մեթոդները (դիսպերսիա, համահարաբերակցություն, կլաստերային և գործոնային վերլուծություն և այլն):

2. Անձի սոցիալական հոգեբանություն

Անձ հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Անհատ, անձնավորություն, անհատականություն, գործունեության սուբյեկտ: Անձի սոցիալ-հոգեբանական կառուցվածքը: Կենսաբանականն ու սոցիալականը անձի կառուցվածքի մեջ: Հոգեկան գործընթացների օրինաչափությունների հաշվառումը միջանձնային փոխհարաբերություններում և մասնագիտական գործունեության ընթացքում: Աշխարհայացքային հիմքեր, արժեքային կողմնորոշումներ, դիրքորոշում, ուղղվածություն, անձի դրդապատճառային ոլորտ: Հոգեկանի ակտիվության մակարդակները: Անգիտակցականն անձի կառուցվածքում և մարդու մղումներում: Անձի ուսումնասիրության նպատակները սոցիալական հոգեբանության մեջ:

Անձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները

Անձի սոցիալական հոգեբանության դետերմինանտները: Բարձրագույն նյարդային համակարգի յուրահատկությունները, շրջապատող միջավայրը և հանրօգուտ աշխատանքը որպես անձի սոցիալ-հոգեբանական զարգացումը պայմանավորող հիմնական գործոններ: Անձի սոցիալ-հոգեբանական տիպերի դասակարգման հիմնական մոտեցումները:

Անձի սոցիալ-հոգեբանական տեսությունների համառոտ բնութագիրը

Ա.Բոդայրովի սոցիալական ընկալման տեսությունը, Վ.Մյասիշչևի հարաբերությունների տեսությունը, Վ.Յադովի դիսպոզիցիաների տեսությունը և Դ. Ուգնաձեի դիրքորոշման տեսությունը: Անձնավորության ուսումնասիրության ակմեոլոգիական մոտեցումները: Ինտեգրալային անհատականության տեսությունը: Անձի հոգեվերլուծական տեսությունները: Զ. Ֆրեյդի, Կ.Յունգի և Ա.Ադլերի մոտեցումները անձի ուսումնասիրության հիմնախնդրին: Վարքաբանական մոտեցումներ: Անձ հասկացությունը արևելյան հոգեբանական և խոհափիլիսոփայական ուսմունքներում:

Անձնավորության սոցիալականացման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները

Անձնավորության սոցիալականացման փուլերը, ինստիտուտներն ու մեխանիզմները: Սոցիալականացման բովանդակությունը: Մարզինալ և կայուն սոցիալականացում: Սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը անձի սոցիալականացման վրա: Է. Էրիկսոնի սոցիալական նույնականության տեսությունը, նույնականության բաղադրամասերը: Նույնականացման համամարդկային, խմբային և անհատական մակարդակները: Գաղափար անձի սոցիալական վարքի մասին: Սոցիալական դեր և վարքագիծ: Անձի սոցիալական վարքի շեղումները: Սոցիալականացում և ապասոցիալականացում: Անձի վերասոցիալականացման (ռեսոցիալիզացիայի) հոգեբանական պայմանները:

Անձի սոցիալ-հոգեբանական մտահասությունը

Սոցիալ-հոգեբանական մտահասության ձևավորման հիմնական պայմանները, մտահասության ձևերը: Հաղորդակցական, պերցեպտիվ (ընկալման) և կենցաղային մտահասություն: Սոցիալ-հոգեբանական մտահասության բացահայտման գործոնները: Սոցիալ-հոգեբանական մտահասությունը որպես մասնագետի առաջատար որակ:

3. Շփման և հասարակական հարաբերությունների հոգեբանություն

Շփման և հասարակական հարաբերությունների կառուցվածքը

Հասարակական հարաբերությունների տեսակները, դրանց կապը շփման հետ: Հասարակական հարաբերությունների դասակարգման հիմքերը: Հասարակական հարաբերությունների տեսակները. արտադրական, տնտեսական, իրավական, բարոյական, քաղաքական, կրոնական, էթնիկական և գեղագիտական հարաբերություններ: Միջանձնային և միջխմբային հարաբերություններ: Միջանձնային փոխհարաբերությունների ընտրողականությունը և խորությունը: Միջխմբային փոխհարաբերությունների բնութագիրը: Ներխմբային ֆավորիտիզմ և արտխմբային թշնամանք:

Շփում, շփման տեսակները

Շփման կառուցվածքը: Շփման հաղորդակցական-ինֆորմացիոն, ճանաչողական և ինտերակտիվ բաղադրամասերը: Շփման խոսքային և ոչ խոսքային տեսակները: Ոչ խոսքային և շփման ձևերը, տեսողական (ասպեկտները) □ Ատրակցիան (միջանձնային գրավչությունը) որպես շփման կարևոր կողմ □ Շփման ֆունկցիաներն ու բարդությունները: Շփման դժվարությունների առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Ինֆորմացիոն, կարգավորիչ և աֆեկտիվ բարդություններ: Խմբի մեջ ներգրավվելու դժվարություններ: Փոխհարաբերությունների զարգացման դժվարություններ: Խմբային գործունեության չձևավորվածության դժվարություններ: Հոգեբանական անհամատեղելիությամբ պայմանավորված դժվարությունները և անձի եսակենտրոն ուղղվածության հիմնախնդիրը: Եսակենտրոնության հուզական և վարքագծային կողմերը: Շփման արդյունավետության բարձրացման հոգեբանական միջոցները: Մասնագիտական շփման հոգեբանական բնութագիրը: Մասնագիտական

շփման առանձնահատկությունները: Զրույցը մասնագիտական շփման գործընթացում, զրույցի վարման տեխնոլոգիան:

Շփման և հասարակական հարաբերությունների դեֆորմացիան

Հասարակական հարաբերությունների դեֆորմացիայի (ձևախախտման) էությունն ու տեսակները: Դեֆորմացիայի նախանշանները: Սոցիալական ախտաբանության և դեֆորմացիայի հիմնական դրսևորումները: Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հասարակական հարաբերությունների դեֆորմացիայի պայմաններում: Շփման դեֆորմացիայի քրեաբանական կողմերը: Սոցիալական ախտաբանության և հասարակական հարաբերությունների դեֆորմացիայի կանխարգելման հոգեբանական ուղիներն ու պայմանները:

Սոցիալական ընկալում և հասարակական փոխըմբռնում

Սոցիալական ընկալման (պերցեպցիա) հիմնական ֆունկցիաները: Սոցիալական ընկալման մեխանիզմները: Բ.Անանևի, Ա.Բոդայլովի, Բ.Լոմովի, Ե.Շորոխովայի սոցիալական ընկալման տեսությունը: Սոցիալական ստերեոտիպ, ստերեոտիպիզացիայի գործընթացը: Նույնացում (իդենտիֆիկացիա), ապրումակցում (եմպաթիա) և միջանձնային գրավչություն (ատրակցիա) □

Խոհաճություն (ռեֆլեքսիա) □ Կաուզալ ատրիբուցիա (պատճառական վերագրում) □ Հասարակական փոխըմբռնման դրսևորումները: Սոցիալական ընկալման խաթարումները և դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները:

4. Հանրությունների և սոցիալական ինստիտուտների հոգեբանություն

Հանրությունների և սոցիալական ինստիտուտների սոցիալ-հոգեբանական բնութագիրը

Քաղաքացիական հասարակության և պետության բնորոշումները Հ.Հեգելի, Ի.Կանտի, Ջ. Լոքի, Շ.Սոնթեսկյեի, Ժ. Ռուսոյի և այլոց աշխատություններում: Քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնախնդիրը Ռուսաստանում: Հասարակական անվտանգության համակարգի խնդիրները: Հանրությունների և սոցիալական ինստիտուտների դասակարգումը: Ա.Պետրովսկու կոլեկտիվի սոցիոմետրիկ հիմնադրույթը: Սոցիալական ինստիտուտների տեսակները, դրանց դերը հասարակական վերահսկողության սահմանման գործընթացում: Սոցիալական ինստիտուտների ֆունկցիաները: Հասարակական շարժունության ձևերը և հետևանքները: Հասարակության շերտավորման սոցիալ-հոգեբանական բնութագիրը:

Հասարակական հազմակերպությունների մշակույթն ու մթնոլորտը

Կազմակերպչական կուլտուրայի հիմնական ֆունկցիաները: Կազմակերպչական կուլտուրայի բաղադրամասերը: Հասարակական հազմակերպությունների սոցիալ-հոգեբանական մթնոլորտի համառոտ բնութագիրը: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի տարրերը և նրա վրա ազդող գործոնները: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի և աշխատանքային գործընթացի միջև կապի հոգեբանական յուրահատկությունները:

Մշակույթն ու կրթությունը որպես հասարակական ինստիտուտներ

Մշակույթը որպես հասարակական ինստիտուտ: Մշակույթ հասկացությունը սոցիալական հոգեբանության մեջ: Մշակույթի տարրերը: Նյութական և հոգևոր մշակույթ: Մշակույթի զարգացման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունները: Կատարսիսի էֆեկտը արվեստի զարգացման մեջ: Կրթությունը որպես հասարակական ինստիտուտ: Կրթության հիմնական ֆունկցիաները, մշակույթի տարածում, սոցիալականացում, ինկուլտուրացիա, սոցիալական ընտրասերում (սելեկցիա), հասարակության սոցիալական և մշակութային փոփոխում: Կրթական գործընթացի կազմակերպումը արտասահմանյան երկրներում:

Փոքր խմբերի կառուցվածքն ու դինամիկան

Փոքր խմբերի տեսակները, դրանց հոգեբանական բնութագիրը: Փոքր խմբերի առաջացումն ու զարգացումը: Փոքր խմբերի հոգեբանության կառուցվածքային բաղադրամասերը: Փոքր խմբերի սոցիալ-հոգեբանական կառուցվածքը: Փոքր խմբերում սոցիալ-հոգեբանական գործընթացների համառոտ բնութագիրը: Խմբային ճնշման գործընթացը: Կոնֆլիկտները փոքր խմբերում, դրանց հաղթահարման հոգեբանական ուղիները:

Ընտանիքի սոցիալական հոգեբանություն

Ընտանիքի միջառարկայական ուսումնասիրությունները որպես ընտանիքի սոցիալական հոգեբանության տեսական հիմք: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական դասակարգումը և ֆունկցիաները: Միամուսնական (մոնոգամ) և բազմակին (պոլիգամ) ընտանիքներ: Ընտանեկան հարաբերությունների համապատասխանությունը հասարակական նորմերին, ավանդական (պատրիարխալ), ժամանակակից (եգալիտար), կոլեկտիվիստական և ինդիվիդուալիստական ընտանիքներ: Ներընտանեկան հարաբերությունների դասակարգումը ըստ կենսակերպի կազմակերպման այլընտրանքային եղանակների: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական պրոբլեմները: Ամուսնության համատեղելիություն, հարմարվողականություն և համախմբվածություն:

Ընտանեկան թերապիայի էությունը, բովանդակությունը և գործընթացի կազմակերպման տարբեր մոտեցումներ:

5. Գործունեության կազմակերպման և կառավարման հոգեբանություն

Գործունեության կազմակերպումը որպես սոցիալական հոգեբանության հիմնախնդիր

Կազմակերպչական սոցիալական հոգեբանության հիմնական հասկացությունները, կազմակերպություն, աշխատակցի անձ և վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Հոգեբանի դերն ու նշանակությունը գործունեության կազմակերպման պրոցեսում, նրա հիմնական ֆունկցիաները, գիտահետազոտական, խորհրդատվական և մանկավարժական ֆունկցիաներ: Հոգեբանի աշխատանքի ձևերը, աշխատանք անձնակազմի հետ, աշխատանքի կազմակերպում, կազմակերպչական կառավարում և սոցիալական պլանավորում:

Կառավարումը որպես սոցիալ-հոգեբանական երևույթ

Կառավարում հասկացությունը ճշգրիտ և հումանիտար գիտությունների համակարգում: Կառավարման օբյեկտ և սուբյեկտ հասկացությունները սոցիալական հոգեբանության մեջ: Խումբը և կոլեկտիվը որպես կառավարման օբյեկտներ: Կառավարման արդյունավետության հոգեբանական ւկայմանները: Կառավարման առանձնահատկությունները կրթական համակարգում: Կառավարման հոգեբանական և մեթոդաբանական հիմքերը: Ֆ.Թեյլորի, Գ.Էմերսոնի, Լ.Մեյոյի, Ջ. Մակ-Գրեգորի տեսությունների համառոտ վերլուծությունը:

Կառավարման սոցիալ-հոգեբանական բնութագիրը և առանձնահատկությունները

Կառավարումը որպես շփման յուրահատուկ ձև: Կառավարողի անձը և կառավարման արդյունավետությունը: Կառավարողի անձի սոցիալ-հոգեբանական գնահատման հիմքերը: Ղեկավարումն ու լիդերությունը կառավարման համակարգում: Գաղափար կառավարման ոճերի մասին (ավտորիտար, դեմոկրատական, անարխիստական, լիբերալ, դիրեկտիվ կոլեգիալ) □

Աշխատակազմի ընտրության, որակավորման և համայրման հոգեբանական կողմերը

Կազմակերպության անձնակազմի մեթոդիկաները, դրանց տարբերակման չափանիշները, միասնական գործակից, մեթոդների հուսալիություն և լայնություն, ընդգրկուն մեթոդական ցուցումներ: Ինժեներակուս կադրերի համալիր և սոցիալ-հոգեբանական գնահատում: Ստեղծագործական, ներդրումային և կատարողական աշխատանքների համար պիտանի անձանց ընտրությանը ներկայացվող հոգեբանական պահանջները:

Կոնֆլիկտները կառավարման գործընթացում

Կառավարման արդյունավետության չափանիշները: Կառավարման համակարգում կոնֆլիկտների բովանդակությունն ու ձևերը: Հոգեբանական պաշտպանական մեխանիզմները կառավարողի անձի կառուցվածքում: Խմբային պաշտպանական մեխանիզմներ: Կառավարողի և կառավարվողի կոնֆլիկտայնության բացահայտման մեթոդները:

8. Մեծ սոցիալական խմբերի հոգեբանություն

Մեծ սոցիալական խմբերի և հասարակական շարժումների սոցիալ-հոգեբանական բնութագիրը

Մեծ խմբերի արտաքին հատկանիշները, զարգացում, սոցիալական նորմերի ընդհանրություն, սեփական դերային կառուցվածք: Դասակարգերը որպես սոցիալական խմբի տեսակներ: Դասակարգերի սոցիալ-հոգեբանական հատկանիշները: Հասարակական զարգացման փուլերը, մինչարդյունաբերական (մինչինդուստրիալ), արդյունաբերական (ինդուստրիալ) և հետարդյունաբերական (պոստինդուստրիալ) հասարակություն: Սոցիալական խմբերի քաղաքական, տնտեսական, սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական կողմերը: Կենսակայունության գործակից: Հասարակական շարժման տեսակները, դրանց սոցիալ-հոգեբանական

հատկանիշները, կազմակերպվածության բացակայություն, անդամների միջև թույլ փոխներգործություն, անանունություն (գաղտնիություն) □ Ռեֆորմատորական (բարենորոգչական) և հեղափոխական շարժումներ: Ազգային-մշակութային միություն, մասնագիտական միություն, մշակութային դաստիարակչական միություն, հիմնադրամներ, օպերատիվ փոխներգործության նպատակով ստեղծված միությունների հոգեբանական վերլուծությունը:

Զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների առանձնահատկությունները

Սոցիալ-հոգեբանական երևույթների դասակարգումը: Հասարակական կարծիք, հասարակական պատկերացումներ, զանգվածային տրամադրություններ և հասարակական ավանդույթներ: Հասարակական կարծիքի գործառույթները (ֆունկցիաները), վարքի կարգավորման ֆունկցիա, փաստերի և իրադարձությունների գնահատման արտացոլման ֆունկցիա: Տարածվածությունը որպես հասարակական կարծիքի զարգացման բնորոշ առանձնահատկություն: Զանգվածային տրամադրությունների դինամիզմի (շարժունության) դրսևորումները: Գաղափար հասարակական դիրքորոշումների մասին:

Էթնիկական (ազգային) խմբերի սոցիալ-հոգեբանական էությունը

Էթնիկական հոգեբանության առարկան, էթնիկական հոգեբանության միջառարկայական բնույթը: Էթնոհոգեբանական գաղափարների զարգացումը Եվրոպայում և ԱՄՆ-ում էթնոհոգեբանական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները (ռեյաստիվիզմ, աբսոլյուտիզմ, ունիվերսալիզմ) □ Գաղափար ազգային բնավորության և ազգային հոգեբանության վերաբերյալ: Էթնիկական ինքնագիտակցություն և էթնիկական նույնականություն հասկացությունների հարաբերակցությունը: Էթնիկական նույնականության կառուցվածքի հոգեբանական բնութագիրը: Էթնիկական նույնականության բաղադրամասերը, պահանջմունքադրդապատճառային, կոգնիտիվ, աֆեկտիվ և վարքագծային բաղադրամասեր: Ազգայինը և համամարդկայինը մշակույթում: Սոցիալականացման էթնոմշակութային առանձնահատկությունները: Սոցիալական վարքի կարգավորման էթնիկական յուրատիպությունը: Էթնիկական ստերեոտիպեր:

Ամբոխի սոցիալ-հոգեբանական էությունը

Գաղափար ամբոխի մասին, ամբոխի տեսակները: Ամբոխի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, խմբային ներշնչվողականության և ընկալման հուզականության բարձրացում, սեփական արարքների համար պատասխանատվության ճնշում, գաղտնիության և անպատժելիության ուժի գիտակցում: Ամբոխի զարգացման մեխանիզմները: Խոսքը որպես ամբոխի անդամների կողմից հոգեբանական ներգործության հիմնական ձև: Հասարակ, արտահայտչական (էքսպրեսիվ), պայմանական (կոնվենցիոնալ) և գործող ամբոխներ: Խուճապի դրսևորումները, զանգվածային փախուստ և խուճապային տրամադրություններ: Խուճապի առաջացման և զարգացման դինամիկան: Ամբոխի մասնակիցների

դերային կառուցվածքը: Խմբային էքսցենզների (անկարգությունների) զարգացման փուլերը, իրադրության բարդացում, հակաիրավական գործողությունների առիթի առաջացում և դրանց իրագործում, հետէքսցեսային իրադրություն:

7. Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հոգեբանություն

Սոցիալական լարվածության պատճառներն ու մեխանիզմները

Սոցիալական լարվածության հասկացության ըմբռնման հիմնական մոտեցումները: Սոցիալական լարվածության մակարդակները: Սոցիալական լարվածության առաջացումը ֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական դեզադապտացիայի պայմաններում: Սոցիալական լարվածության երկակի բնույթը: Սոցիալական լարվածության դեստրուկտիվ (ապակառուցողական) և կառուցողական դերերը: Սոցիալական լարվածության պատճառականության հիերարխիան: Բարձր սոցիալական լարվածության աղբյուրների դասակարգումը:

Սոցիալական լարվածության դրսևորման ձևերը

Սոցիալական լարվածության դինամիկան և զարգացման մեխանիզմը: Խուճապը արտակարգ իրավիճակներում և նրա դերը սոցիալական լարվածության առաջացման գործում: Սոցիալական լարվածության առաջացումը վթարների հակազդման ժամանակ, հակազդման տեսակները: Սոցիալական լարվածության սոցիալ-տնտեսական պատճառները: Սթրեսի հաղթահարման անհատական առանձնահատկությունները:

Կոնֆլիկտների սոցիալ-հոգեբանական բնութագիրը

Կոնֆլիկտների կառուցվածքը: Կոնֆլիկտի ուսումնասիրության հիմնական ուղղությունները արտասահմանում, սոցիալ-դարվինիզմ, հոգեվերլուծություն, գեշտալտհոգեբանություն, ինտերակցիոնիզմ, մաթեմատիկական մոդելավորում և այլն: Կոնֆլիկտի հիմնական հատկությունները; Կոնֆլիկտային իրավիճակների տեսակները: Կոնֆլիկտի կառուցողական, ապակառուցողական և ախտորոշիչ ֆունկցիաները: Կոնֆլիկտի դինամիկայի փուլերը. մինչև կոնֆլիկտային իրադրություն, կոնֆլիկտային փոխներգործություն և կոնֆլիկտի հարթում: Կոնֆլիկտների հարթման հոգեբանական ուղիները: Բանակցությունները որպես կոնֆլիկտի հաղթահարման միջոց:

Սոցիալական լարվածության և կոնֆլիկտների հաղթահարման հոգեբանական ուղիներն ու պայմանները

Սոցիալական լարվածության հաղթահարման տեխնիկան: Սոցիալական լարվածության հաղթահարման գործընթացի մակարդակները. միկրո և մակրո մակարդակներ: Սոցիալական մտահասությունը որպես սոցիալական լարվածության հաղթահարման միջոց: Ֆրոստրացիայի վիճակում անձի և հասարակության ապակառուցողական վարքագծային դրսևորումները, ագրեսիա, ռեպրեսիա (ճնշում), էսկապիզմ (պրոբլեմից խուսափում), ռեգրեսիա, ռացիոնալիզացիա, սուբլիմացիա, պրոյեկցիա, աուտիզմ (ներանձնացում) □ Ապակառուցողական վարքի

հաղթահարմանն ուղղված թերապևտիկ համակարգերը: Ձեռնարկությունների հակավթարային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման պայմանները:

8. Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան, համակարգը և մեթոդաբանական հիմքերը

Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկան, նրա տեղը հոգեբանական գիտության համակարգում

Արտակարգ իրավիճակների հոգեբանությունը որպես արտակարգ իրավիճակներում մարդկանց վարքի և գործունեության օրինաչափություններն ուսումնասիրող գիտակարգ: Արտակարգ իրավիճակների հոգեբանության հիմնական հասկացությունները (կատեգորիալ ապարատը) □ Արտակարգ իրավիճակներում մարդկանց վարքի և հոգեվիճակի գնահատումը, կանխատեսումը և գործունեության արդյունավետության որպես արտակարգ իրավիճակների հոգեբանության ուսումնասիրության հիմնախնդիրներ: Արտակարգ իրավիճակների հոգեբանության առարկայի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները:

Արտակարգ իրավիճակների հոգեբանության կառուցվածքը և նշանակությունը, նրա ժամանակակից բնագավառները

Արտակարգ իրավիճակների հոգեբանության հիմնական բաղադրամասերը և մասնավոր տեսությունները: Արտակարգ իրավիճակների հոգեբանության ժամանակակից տեսական և կիրառական բնագավառները: Արտակարգ իրավիճակների հոգեբանության կողմից լուծվող խնդիրները, նրա դերը արտակարգ իրավիճակներում անձի հոգեկան առողջության պահպանման և նեգատիվ (բացասական) հոգեբանական երևույթների առաջացման կանխարգելման գործում:

Արտակարգ իրավիճակների հոգեբանության պատմական զարգացումը

Արտակարգ իրավիճակների հոգեբանության տեսական հիմքերը և հիմնական մոտեցումները (հոգեֆիզիոլոգիական, հոգեսոցիալական, կոգնիտիվ, վարքաբանական, հոգեդինամիկ) □

Արտակարգ իրավիճակների հոգեբանության տեղը գիտությունների համակարգում

Արտակարգ իրավիճակների հոգեբանության կապը ընդհանուր, սոցիալական, տարիքային և մանկավարժական, բժշկական, ինժեներական, իրավաբանական և քաղաքական հոգեբանության, ինչպես նաև հաշվողական տեխնիկայի, սոցիոլոգիայի, մանկավարժության, փիլիսոփայության հետ:

Արտակարգ իրավիճակների հոգեբանության մեթոդաբանությունն ու մեթոդները

Արտակարգ իրավիճակների հոգեբանության ընդհանուր, հատուկ և մասնավոր մեթոդաբանությունը: Մասնավոր մեթոդաբանության հիմնական և լրացուցիչ մեթոդները: Արտակարգ իրավիճակների հոգեբանության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների համակարգը: Արտակարգ իրավիճակների տեսակները:

9., Անձի հոգեբանական ադապտացիան և դեզադապտացիան արտակարգ իրավիճակներում

Անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիան որպես արտակարգ իրավիճակների հոգեբանության ուսումնասիրության հիմնախնդիր

Ադապտացիայի հիմնահարցը նեոբիհեյվիորիստական, ինտերակցիոնիստական և հոգեվերլուծական աշխատություններում (Հ.Այզենկի, Լ.Ն.Ֆիլիպսի, Հ.Հարտմանի, Ա.Ֆրեյդի մոտեցումները) □ Սոցիալ-հոգեբանական հարմարվածության չափանիշները: Սոցիալ-հոգեբանական ադապտացիայի տարատեսակները: Սոցիալականացում և ադապտացիա: Ադապտացիայի հիմնախնդրի կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցումները:

Անձնավորության սոցիալ-հոգեբանական ադապտացիան արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում

Ճգնաժամերի առաջացման և զարգացման հոգեբանական մեխանիզմները, տազնապ, վախ, սթրես, ֆրուստացիա, աֆեկտ, կոնֆլիկտ, ճգնաժամ: Տազնապ, տազնապայնության վիճակ հասկացության բնութագիրը: Անձնային և իրադրային տազնապայնություն: Վախի առաջացման պայմանները: Վախի ուսումնասիրությունները Ե. Իգարդի աշխատություններում: Տոբիան որպես վախի յուրահատուկ տեսակ: Սթրեսի հիմնադրույթը Հ.Սելյեի ուսմունքում: Ընդհանուր հարմարվողական համախտանիշ: Հոմեոսթազի տեսությունը որպես սթրեսի ուսմունքի տեսամեթոդաբանական հիմք: Կարճատև, հուզական երանգավորմամբ, իմպուլսիվ վարքային հակազդումներով և տևական սթրեսներ: Սթրեսի զարգացման փուլերը: Հետտրավմային սթրեսային խանգարումների առաջացման պայմանները և զարգացման դինամիկան: Ֆրուստրացիայի սահմանումը: Ֆրուստրացիոն վարքի տեսակները, շարժողական գրգռվածություն, ապատիա, ստերեոտիպիա, ագրեսիա և դեստրուկցիա, ռեգրեսիա: Ֆրուստրացիայի կլսուցողական և ապակլսուցողական ներգործության ձևերը: Աֆեկտի հոգեբանական նշանակությունը և առաջացման պատճառները: Աֆեկտի ախտորոշիչ նշանները: Ֆիզիոլոգիական և ախտաբանական աֆեկտի տարբերությունները: Աֆեկտիվ գրգռվածության դինամիկան: Հոգետրավմային, աֆեկտածին իրավիճակների նշանները: Գաղափար անոմալ աֆեկտի մասին: Կուտակված (կումուլյատիվ) աֆեկտ: Կոնֆլիկտ հասկացության հոգեբանական բովանդակությունը: Կոնֆլիկտի մեկնաբանության հակասականությունը հոգեբանության մեջ: Կոնֆլիկտի ըմբռնման կոգնիտիվ, բիհեյվիորիստական և հոգեդինամիկական մոտեցումները: Ճգնաժամերի տեսության մեթոդաբանական հիմքերը (էվոլյուցիայի և ադապտացիայի տեսությունները, մարդկային ձեռքբերումների մոտիվացիայի և տարիքային շրջաբաժանումների տեսությունները) □ Ճգնաժամերի հանգեցնող իրադարձությունները: Ճգնաժամերի զարգացման փուլերը Զ. Կապլանի աշխատություններում: Ճգնաժամերը նշանակալից հուզական հարաբերությունների ոլորտում:

Ես-ի պաշտպանական մեխանիզմները, հարմարվողական ֆունկցիաները

Պաշտպանական մեխանիզմների հիմնադրույթը էգո-հոգեբանության ներկայացուցիչների աշխատություններում: Պաշտպանական մեխանիզմների հիմնական տեսակները, արտամղում և ճնշում, ռացիոնալիզացիա, ինտելեկտուալիզացիա, ռեգրեսիա, հակադարձ ռեակցիայի ձևավորում, պրոյեկցիա, պրոյեկտիվ իդենտիֆիկացիա, հոգեբանական նույնացում, ինտրոյեկցիա (ներդրում), սուբլիմացիա: Անձնավորության ինքնագիտակցությունը և ադապտացիան: Ինքնագիտակցության կառուցվածքը: Իրադրային «Ես» պատկերները և նրանց հարմարվողական գործառույթները: «Ես» հիմնադրույթի ակտիվացումը և հարմարվողական վարքի կարգավորումը:

10. Արտակարգ իրավիճակներում անձնավորության գործունեության հոգեբանություն

Արտակարգ իրավիճակները մարդ-մարդ և մարդ-մեքենա փոխհարաբերություններում

Արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեության կառուցվածքային-հոգեբանական վերլուծությունը: Արտակարգ իրավիճակները սոցիալական մասնագիտություններում: Արտակարգ իրավիճակները իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ: Արտակարգ և ճգնաժամային իրավիճակները մանկավարժի գործունեության մեջ, դրանց հոգեբանական հետևանքները: Հուզական այրման համախտանիշ: Գաղափար էքսրեմալ մարզաձևերի մասին: Մարզիկների հոգեբանական պատրաստության խնդիրները: Ինֆորմացիոն (տեղեկատվական) կառուցվածքի փոփոխությունը մեխանիզացման և ավտոմատիզացման պայմաններում: Օպերատորի գործունեության երկատումը բարդ տեխնիկական համակարգերի կառավարման ընթացքում: Հիշողության կորուստը արտակարգ իրավիճակներում, ռետրոգրադային (հետադիմական) ամնեզիա: Հետադարձ կապի բացակայությունը որպես խուճապի առաջացման պայման: Անձի հոգեկան վիճակների կայունության պրոբլեմը տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում: Պերսոնիֆիկացիայի (անձնավորման) երևույթը մարդ-մեքենա փոխհարաբերություններում: Անձնակազմի համախմբվածության նշանակությունը բարդ տեխնիկական համակարգերում: Ընկալման ֆունկցիաների խանգարումները անկշռության պայմաններում: Աֆերենտացիայի փոփոխությունները և տարածության ընկալման ֆունկցիոնալ համակարգերի անհամաձայնությունը: Տարածական պատրանքներ: Ինքնագիտակցության խանգարումներ: Դեպերսոնալիզացիայի համախտանիշը զգայական դեպրիվացիոնի (զգայազրկվածության) և անկշռության ժամանակ: Աֆեկտիվ հակազդումներ: Կողմնորոշումը տիեզերական տարածության մեջ: Շարժումների աններդաշնակություն: Տեսական հիպոդինամիան որպես պսիխոզեն (հոգեծին) գործոն: Իմացական գործունեությունը փոփոխված ինֆորմացիոն կառուցվածքում: Տեսողական պատրանքները թոնիկ ժամանակ: Միալ դատողությունները տեխնիկական համակարգերի հետ աշխատանքի ընթացքում:

Ինֆորմացիայի բացակայությունը որպես արտակարգ իրավիճակներում լրացուցիչ սթրեսածին գործոն: Դեսինխրոնոզի երևույթը:

Մարդու գործունեությունը բնական, սոցիալական և տեխնածին աղետների պայմաններում

Ռազմական գործողությունները որպես սոցիալական համաղետների յուրահատուկ տեսակ: Զորքի բարոյակամային որակների դերը ռազմական գործողությունների ժամանակ: Մարտական ոգու առաջացման և պահպանման պատմական փորձը: Մարտի հոգեբանական տեխնիկան: Հրամանատարի հոգեբանական պատրաստվածության դերը ռազմական գործողությունների ժամանակ խուճապի կանխարգելման գործում: Ռազմական գործողությունների բացասական հոգեբանական հետևանքները: Ռազմական-տրավմատիկ սթրես: Ռազմական կոնֆլիկտների հոգեբանական հետևանքների կանխատեսման հոգեբանական հիմնահարցերը: Փախստականների հոգեբանական ադապտացիայի հիմնախնդիրը արտակարգ իրավիճակների հոգեբանության մեջ: Բնական աղետներից տուժած մարդկանց վարքի, գործունեության և հոգեվիճակի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Խուճապի դրսևորումները տեխնածին և բնածին (էկոլոգիական) աղետների ժամանակ, խուճապի ձևերը և առաջացման պատճառները: Չեռնոբիլյան ուսղիացիոն (ճառագայթային) խուճապի ֆենոմենը (երևույթը) □ Վարքագծային շեղումները հետսթրեսային և հետձգնաժամային իրավիճակներում: ***Արտակարգ իրավիճակներում աշխատող մասնագետների ընտրության հոգեբանական հիմնահարցերը***

Արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեության պրոֆեսիոգրաման: Իմացական ենթակառուցվածք: Հաղորդակցական ենթակառուցվածք: Արտակարգ իրավիճակներում աշխատանքի արդյունավետության բարձրացման հոգեբանական կողմերը: Մասնագիտության պիտանիության հիմնական գործոնները և դրանց համապատասխանող անձի սոցիալ-հոգեբանական հատկությունները: Զարգացած ինտելեկտ: Ճկուն, ստեղծագործական մտածողություն: Մտքի վերլուծական կերտվածք, կանխատեսման ընդունակություններ, գլխավորն առանձնացնելու կարողություն: Զարգացած ինտուիցիա: Շփման խոսքային և ոչ խոսքային միջոցների ազատ տիրապետում: Համարժեք ինքնագնահատական, բարձր ինքնահսկողություն: Ակտիվություն, նախաձեռնողունակություն, կամք: Ինքնուրույնություն, կազմակերպվածություն: Նյարդա-հոգեկան կայունություն: Երկարատև ծանրաբեռնվածության պայմաններում աշխատունակության բարձր մակարդակ: Հակազդման սթենիկ տիպ: Արտակարգ իրավիճակներում մասնագիտական հոգեբանական ընտրություն:

11. Արտակարգ իրավիճակների բացասական հետևանքների կանխարգելման և հաղթահարման հոգեբանական ուղիները

Արտակարգ իրավիճակներում հոգեծին (փսիխոզեն) հակազդումների կանխարգելման գիտատեսական հիմքերը

Գաղափար փսիխոզեն հակազդումների մասին, դրանց հոգեբանական դրսևորումները արտակարգ իրավիճակներում: Կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը մինչսթրեսային իրավիճակներում: Մասնագիտական այրման համախտանիշի կանխարգելման հոգեբանական մեթոդները: Հոգեկան տրավմայի հետևանքով ձևավորված ասոցիալ, դեստրուկտիվ (ապակառուցողական) և սուիցիդալ վարքի կանխարգելման ուղիները: Ճգնաժամային խորհրդատվության տեսությունն ու պրակտիկան: Արտակարգ իրավիճակներում տուժած երեխաների հետ հոգեբանական աշխատանքի իրակացման յուրահատկությունները:

Անձի կողմից տրավմատիկ փորձի հաղթահարման ռազմավարությունը

Հաղթահարման ռազմավարության կոնցեպտուալ (հայեցակետային) սխեման: Հաղթահարման ռազմավարության հիմնական ձևերը, վերաձևավորման ռազմավարություն, ինքնապահպանմանը նպաստող հնարքները կենսական դժվարությունների և դժբախտությունների ժամանակ: Մասնավոր իրադրային հաղթահարում: Հաղթահարման նախադրյալները, ռազմավարությունը և տակտիկան: Հասարակական աջակցությունը որպես հաղթահարման յուրահատուկ միջոց: Ինքնուրույն և մասնագիտական աջակցության միջոցով իրականացվող հաղթահարում: Գիտակցական և անգիտակցական հաղթահարում: Տրավմատիկ փորձի իմաստավորումը: Վարքագծային նմուշների փոփոխությունը: Սահմանային լարվածության վիճակները և անձնային աճի հնարավորությունները: Ճգնաժամային և տրավմատիկ իրադարձությունների հաղթահարման անձնային և իրադրային գործոնները: ***Հետտրավմային սթրեսների զարգացման ռիսկային և թերապիայի հնարավորությունները***

Հոգեկան նորմայի և ախտաբանականի հիմնահարցը հոգեբանության մեջ: Հոգեկան շեղումներ և խանգարումներ: Սահմանային վիճակներ: Հետտրավմային սթրեսային խանգարումները (ՀՏՄ) ամերիկյան պաշտոնական ախտորոշիչ ստանդարտում: ՀՏՄ-ի ուսումնասիրության բազմագործոն տեսությունը: Բարդ զուգորդային ցանցի տեսությունը: ՀՏՄ-ի խմբային թերապիան: Փսիխոդրաման ՀՏՄ-ի ժամանակ □ ՀՏՄ-ի թերապիայի հոգեդինամիկական մոտեցումները □ Ասաջուլիի հոգեսինթեզի համակարգը □ Էքզիստենցիալ, կոգնիտիվ և վարքային թերապիա □ Գեշտալտ թերապիա, սուզեստիվ (ներշնչանքի) մեթոդներ □ Տազնապի հաղթահարման տեխնիկա □ Դեսենսիբիլացիայի և տրավմատիկ ապրումների վերամշակումը աչքերի շարժումների միջոցով □ Աուտոտրենինգ □ Տրավմատիկ փորձով անձանց հետ աշխատելու հոգեբանական դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները □

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ պայմաններում անձի հոգեբանական վերականգնման տեխնիկան, Ե., ԵՊՀ, 1997:
2. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Ե., ԵՊՀ, 1999:
3. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները, Ե., 2008:
4. Андреева Г.М. Социальная психология, М., 1988.
5. Большаков В.К). Пеихотрейниш; Социодипамика; Упражнения; Игры -М., 1996.
6. Гостюшина А. В. Энциклопедия экстремальных ситуаций. М. Зеркало, 1994.
7. Денис Б. Энциклопедия выживания и спасения, 1997..
8. Ильин А. А. Школа выживания при авариях и стихийных бедствиях. М. Эксмо-Пресс, 2001.
9. Китаев-Смык Л. А. Психология чеченской войны. М, 2002.
10. Короленко Ц. П. "Психофизиология человека в экстремальных условиях". Л., Медицина, 1978.
11. Кричевский Р.Л., Дубровская Е.М. Психология малой группы, М., 1991.
12. Малкина-Пых И. Г. Экстремальные ситуации. М. ЭКСМО, 2006.
13. Майерс Д. Социальная психология, Санкт Петербург, Питер, 1997.
14. Немов Р.С. "Психология", М., т. 1 и 2, 1999 .
15. Попов В. Е. Психологическая реабилитация военнослужащих после экстремальных воздействий. М., 1992.
16. Ситников А.П. Современные прикладные психотехнологии: процесс и язык коммуникации, М., 1992.
17. Тарабрина П. В. Практикам но психологии посттравматического стресса, СПб. Питер, 2001.
18. Тарас А. Е., Сечепок К. В. Психология экстремальных ситуаций, Минск, 1999.
19. Цуканова Е. В. Психологические механизмы поведения и деятельности в экстремальных условиях. VI. РСПУ, 1991.
20. Черепанова Е. М. Саморегуляция и самопомощь при работе в экстремальных условиях. М., 1995.